# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | «Անվեհեր փրկարար» մեդալը բաղկացած է երկու մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացված 39 x 42.5 մմ (շեղումը +/- 0,2մմ) չափսերով խաչից, որի կենտրոնում տեղակայված է 13մմ (շեղումը +/- 0,1մմ) տրամագծով շրջանաձև սկավառակ, որի եզրագծի երկայնքով գրված է «ԱՆՎԵՀԵՐ ՓՐԿԱՐԱՐ» հայերեն գրությունը: Սկավառակի կենտրոնում պատկերված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: Կրծքանշանի խաչը չորս անկյուններից զարդարված է դեկորատիվ ճառագայթներով: Խաչի թևերը պատված են մուգ կապույտ էմալով: Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համաձուլվածքից (մեդալի ընդունման ժամանակ ներկայացվում է պղնձի պարունակության վերաբերյալ փաստաթուղթ), փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշմման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: «Անվեհեր փրկարար» մեդալը դարձերեսի կենտրոնական մասում ունի երեք շարքով՝ «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հայերեն գրառում: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 0028-ից): Կախիչը դարձերեսի կողմից ունի հատուկ ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24մմ (շեղումը +/- 0,05մմ): Կախիչը պաստառապատված է 24 մմ (շեղումը +/- 0,05մմ) լայնություն ունեցող կապույտ մետաքսյա ժապավենով: Ժապավենը աջ կողմից եզերված է 1 մմ (շեղումը +/- 0,01մմ) լայնություն ունեցող 3 մոխրագույն շերտագծերով: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ШИН ЛИДЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | | |